ԴԱՐՁ ԴԵՊԻ ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

(ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ, ՄԵԾ ՊԱՀՔԻ ԱՌԻԹՈՎ)

Այսօր ես ցանկացա օրվա պատգամը անձնապես տալու մեր ժողովրդին Մայր Աթոռի այս սրբական բեմից, որովհետև մեր եկեղեցին անցյալ կիրակի օրվանից սկսյալ մտել է մի նոր հոգևոր մթնոլորտի մեջ: Նա ապրում է այժմ հոգևոր կյանքի տենդագին մի շրջան: Ներհայաց կյանքի, մեր հոգեկան աշխարհի մեջ նայելու շրջանն է բացվել, քառասուն օրերի մի շրջան, Մեծ Պահք անունին տակ ծանոթ: Աշխարհումս բոլոր Եկեղեցիները ունեն այս քառասնօրյա շրջանը, որին հաջորդում է մեծագույն տոնը քրիստոնեության: Դա Քրիստոսի Հարության տոնն է: Տեսնում եք դուք, եկեղեցու խորանը փակ է ձեր աչքերի առջև: Տեսանելի վարագույրին փակումը խորհրդանշում է բացումը այն վարագույրին, որ ձեր անձերի շուրջ է պատել ամենօրյա ձեր կյանքի ընթացքում: Խորտակումը մեկ մեր մեջ բանտարկող այդ վարագույրին, որի անունն է մեղք, սայթաքում, անկում, գայթակղում, հոգևոր հիվանդություն: Տեսնում եք, որ եկեղեցին այժմ շարականների, աղոթքների մի ամբողջ աշխարհ է բացել մեր ժողովրդի ընկալման համար: Նրանց միջից հրավիրում է մեկ բոլորիս, որ նայենք մեր հոգեկան ներաշխարհին, կտրենք մեր նայվածքները դրսից, ուրիշից, բերենք և սևեռյալ լույսի նման կենտրոնացնենք մեր անձերի վրա և հարց տանք մենք մեզի. ո՞վ եմ ես Աստուծո հայելու մեջ, ո՞վ եմ ես իմ խղճի առաջ: Ա՞յն եմ, ինչ որ Աստված ուզում է, որ լինեմ, ինչ որ Ավետարանը ինձնից պահանջում է, որ լինեմ: Եվ եթե չեմ, ինչու՞ չեմ և ինչու՞ պետք է լինեմ:

Սիրելի հավատացյալներ, այսօրվան իմ խոսքին համար ես որպես բնաբան և մեկնակետ եմ ընտրել մեր հայոց Ժամագրքի, ամենօրյա աղոթքի մատյանի այն տողերը, որտեղ աղոթագիր վարդապետը ասել է. **«Առաջնորդեա մեզ ի խա-**

ուրէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս, յապականութենէ յանապականութիւն, յանգիտութենէ ի գիտութիւն ճշմարտութեան իւրոյ»:

Մեծի պահոց քառասնօրյա շրջանը ես կոչում եմ մի հոգևոր ճանապարհագնացություն: Որտեղի՞ց որտեղ: Ոչ թե աշխարհագրական մի վայրից մի ուրիշ աշխարհագրական վայր: Ճանապարհորդությունը այս պարագայում տեղափոխություն չէ: Սա հոգևո՛ր ճանապարհորդություն է, մեր անձից դեպի Աստված գնալն է և ապա Աստծուց վերադառնալը մեկի՝ յուրաքանչյուրիս: Այս ճանապարհորդությունը մեր անձին բացումն է Աստուծո լույսին առաջ, ներթափանցումը Աստուծո լույսով և հայտնաբերումը մեր մեղավորությանը և այդ մեղավորության խորտակումը բարձրացումով առ Աստված: Աստծուց երբ մենք վերադառնանք մեկի, կերպարանափոխված կլինենք: Կլինենք այն, ինչ որ Աստված մեկ ստեղծել է, որ լինենք, և ոչ թե այն, ինչ որ աշխարհային կյանքի սայթաքումները մեկ հաճախ մոլորեցրել են, և մենք օտարացել ենք մեր հանդեպ: Ամենից մեծ մեղքը ինքն իր կոչումին դավաճանելն է, մա՛րդ լինելու կոչումին: Մարդ կոչումին մեջ Աստուծո ներկայությունը կա: Աստված մեկ աշխարհի արարչագործության ուրիշ առարկաներից և էակներից տարբեր է ստեղծել: Աստված մեր մեջ իր սեփական կնիքն է դրել, մեկ պատվել է, իր նմանությամբը ստեղծելով մեկ: Բայց, հարց եմ տալիս, մենք նմանվո՞ւմ ենք նրան մեր կյանքովը: Ապատ կամքով է ստեղծել մեկ, չի պարտադրել, ցույց է տվել ճանապարհը, ուղին բացել է մեր առաջ, բայց մեկ է թողել գնալու, քայլելու, առաջանալու ապատությունը: Երբ մենք այդ ապատությունը չարաչար գործածենք, շեղված կլինենք այն ճանապարհից, որ Աստված մեկ համար բացել է մեր մեջ դնելով իր պատկերը և ապա իր Միածին Որդին առաքելով, որպեսզի աշխարհի մեղքերից, փոշիներից և փուշերից վնասված այդ պատկերը վերականգնի իր իսկատիպ կերպարին մեջ: Աստված Քրիստոսով եկավ, որ մեր մեջ վերհայտնի մեկ համար մեր սեփական ինքնությունը, Աստվածատիպ անձ լինելու մեր բնությունը և մեր արժանապատվությունը:

Մեծ Պահքը, հետևաբար, երբ մեկ համար լինի այդ ճանապարհորդագնացությունը, որ մեկ դեպի Աստված տանելուց հետո, երբ մեկի կվերադարձնի պայծառակերպված վիճակով, Հարուցյալ Փրկիչը ընդունելու ատակ դառնալու վիճակով, այն ատեն է, որ մենք Մեծ Պահքի մեջ իսկապես մեր եկեղեցու հոգին և նպատակը ապրած կլինենք:

Ես որքան իմացել եմ, որքան լսել եմ մեր Հայաստան

Մայր Աշխարհի մեջ անցնող տասնամյակների ընթացքում, այն բոնակալական լուծի ներքո, որտեղ ապրել է մեր ժողովուրդը, մեր եկեղեցու սեփական, յուրահատուկ հոգեփոխիչ ավանդությունները նսեմացել են հաճախ մեր ժողովրդի առօրյա կյանքում: Ո՞վ է Մեծ Պահքին կարևորություն տալիս այսօր: Հարց տանք մենք մեկի: Ո՞վ է ճանաչում, թե ինչ է Մեծ Պահքը, Ո՞վ է գալիս եկեղեցի լսելու համար Արևագալի շարականները. **«Լո՛յս, Արարիչ Լուսոյ, Առաջին Լոյս, բնակեալդ ի լոյս անմատոյց, ի ծագել լուսոյ առաւօտուս՝ ծագեա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի»:** *Շնորհալու հորինած շարականն է սա: Ո՞վ է գալիս եկեղեցի, որ այնտեղ լսի Նարեկացու աղոթքը.* **«Ընկա՛լ քաղցրութեամբ, Տէր Աստուած հկօր, դառնացողիս կաղաչանս»:** *Մենք հաճախ այստեղ կտրվել ենք մեր եկեղեցու ջրտուքից: Մեծ Պահքը միայն որոշ տեսակի կերակուրներից հրաժարվելու հարց չի: Մեծ Պահքը ուտել-չուտելու հետ կապված հարց չի: Եկեղեցին մեր ուտելիքով չէ, որ կկբաղվի: Եթե որոշ կանոններ են սահմանվել, և ճիշտ են արել մեր հայրերը, դրանք նրա համար են եղել, որ մենք խուսափենք այնպիսի կերակուրներից, այնպիսի խրախճանքներից, այնպիսի հաճոյապաշտական բարքերից և սովորություններից, որոնք մեկ մոլորեցնում են: Այդ հրաժարումը առիթ է տալիս մեկ, որ մենք նայենք մեր հոգեկա՞ն աշխարհին: Դա նպատակ չի, դա միջոց է մեր նպատակին հասնելու: Բուն նպատակը Մեծ Պահքին՝ մեր հոգեկան բյուրեղացումն է, մաքրումը մեր անձին, հարապատացումը մեր սեփական աստվածատիպ ինքնությանը, որ աղարտվել է հաճախ և աղարտվում է միշտ մեր մեղանչական բնությանը բերումով իբրև մարդ: Չկա մարդ աշխարհում, որ կարենա ասել, թե ինքը սուրբ է, կատարյալ է: Քիչ առաջ այս արբապան բեմից կարդացվեց Ավետարանի այն հատվածը, որի վերջին բառերն էին.* **«Եղերուք կատարեալ, որպէս և Հայրն ձեր Երկնաւոր կատարեալ է»:** *Բայց մարդը Աստված չէ, որ կարենա կատարյալ լինել: Միակը, որ կատարյալ է՝ Աստվածն Ի՞նքն է: Մեր կատարելությունը Նրա կատարելությանը հասնելու մեր ճիգին, մղումին, ջանքին, ձգտումին, կամեցողության մեջն է: Մեծ Պահքը մեկ մեր սայթաքումից վերականգնելու և մեր մեջ եղող թերությունը դարմանելու, Կատարյալին ձգտումը որպես կանթեղ մեր մեջ վերստին վառելու գեղեցկագույն առիթն է: Ես այս քառասնօրյա շրջանը մեր եկեղեցու կյանքում անվանում եմ գարնան շրջան, այսինքն՝ հոգևո՛ր գարուն պետք է լինի, որպեսզի մեր մեջ մարմնով և մարմնեղենությամբ կոշտացած անձը կակուղանա*

հոգիին կորությամբը, որպեսզի վերստին գտնենք մեր աստվածատիպ բնության թարմությունը:

Հետևաբար, այսօր ես կոչ եմ անում մեր ամբողջ ժողովրդին, որ վերադառնա իր յուրահատուկ ազգային-եկեղեցական ավանդություններին, վերականգնենք մեր մեջ անցյալում մոռացված կամ վերացած մեր եկեղեցու սուրբ ավանդությունները: Մեծ Պահքը պահենք եկեղեցի գնալով ամեն կիրակի, գնալով Արևագալի, Խաղաղականի, Հանգստյան ժամերգություններին, որոնց անուններն անգամ մոռացվել են շատերի կողմից: Ես հիշում եմ, ինչպես ուրիշ երկրներում, չորեքշաբթի և ուրբաթ առավոտները և երեկոները եկեղեցիները լիքն էին ժողովուրդով: Լսում էին Աստուծո խոսքը, նրանց ականջներում և ականջներից դեպի հոգիների ներսը հնչող խոսքով սնվում էին մեր հայրերի սուրբ ապրումների արբացնող կորությամբը: Ես կոչ եմ անում մեր ժողովրդին, որ վերադառնա դեպի ժուժկալություն և զգաստություն: Մենք ներկայումս նոր աշխարհայնապաշտության փորձության ենք մատնվել. ինձ լավ հասկացեք: Հոգևոր արժեքներից հեռացել ենք և պետք է վերադառնանք մեր նոր հայրենիքի, մեր նորանկախացյալ պետության այս դարաշրջանում վերագտնելու համար մեր սեփական հոգևոր ինքնությունը: Առանց հոգևոր, առանց բարոյական այդ սկզբունքներին ես չեմ կարող երևակայել, որ կորավոր կլինենք: Սկզբը պահողը հոգին է կենդանարար, ինչպես ասում է Սվետարանը: Հոգին է կենդանարար, նյութը կսպանե, հոգին է, որ կապրեցնե:

Կոչ եմ անում մեր ժողովրդին, որ Մեծ Պահքի այս շրջանին համեստ ապրեն, հեռու մնան ավելորդ, անիմաստ, ճղճիմ այնպիսի ապրելակերպերից, որոնք մեր մեջ կմեկ կսպանեն մեր ինքնությունից մեկ հեռացնելով: Ի՞նչ գեղեցիկ կյանք է պարկության կյանքը և որքան վնասաբեր է շռայլության կյանքը ներկա աշխարհում մանավանդ:

Վերջապես, ես կոչ եմ անում մեր ժողովրդին, որպեսզի Մեծ Պահքի շրջանին ոչ թե միայն իրենք իրենց մասին մտածեն, յուրաքանչյուրը իր մասին, այլ նաև ծառայության մասին, ուրիշին բարիք գործելու մասին: Մեծ Պահքի ընթացքում առաքինությունները, բարոյական այն արժանիքները, որ մարդ էակը կբարձրացնեն՝ պետք է տարածվեն ժողովրդի մեջ: Չեկ մի օրինակ տամ. եթե Պահոց շրջանին դուք կարենաք մի տկար անձի օգնել, մի տարեց ծեր անձի գետնից վեր բարձրացնել, մի հիվանդին, մի որբին, մի աշակերտին օգտակար լինել՝ դա Մեծ Պահքին հավատարիմ գտնվելու լավագույն ձևերից մեկն է, որովհետև ուրիշին բարիք ընծայելը, ուրիշին

երջանկություն ընծայելը ինքն իրեն համար նաև, իր սեփական երջանկությունը բավմապատկել կնշանակի: Եթե բարիքը մեր մեջ պահենք, ամբողջականորեն և հարապատորեն քրիստոնյա չենք լինի:

Սիավասիկ, սիրեցյալ հավատացյալներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, վերադա՛ռձ, վերադա՛ռձ դեպի մեր ինքնությունը, մեր հոգևոր արժեքների վերակենդանացումը մեր առօրյա կյանքի մեջ: Այս է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատգամը իր ողջ ժողովրդին և՛ Հայաստանում և՛ արտասահմանում, որպեսզի երբ գա Հարության տոնը, և **ՓԱՌՔ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՔՈ, ՏԵՐ** *ասենք, անկեղծ լինենք, Քրիստոսը իբրև Հարուցյալ Փրկիչ մեր մեջ վերստին ապրի մեր հայրերին հավատքին կորությամբը և մեր կյանքի երջանկության հեռանկարովը և նպատակովը:*

Սիա թե ինչու այսօր իմ խոսքս փակելուց առաջ պիտի ասեմ մի անգամ ևս. եղբայրներ և քույրեր, եկեք գնանք **խավարից դեպի լույս, մահվանից, բարոյական մահվանից դեպի կյանք, ապականությունից, մեղավորությունից դեպի անապականություն, դեպի հոգեկան մաքրություն և, վերջապես, անգիտությունից դեպի ճշմարտության գիտությունը, ճշմարտության յուրացումը մեր կողմից:** *Եվ այս բոլորը կարող ենք անել, եթե հետևենք մեր 12-րդ դարի մեծագույն աստվածաբաններից Ներսես Լամբրոնացու հետևյալ խոսքին, որ ասում է.* **«Ի ներքս ի քեզ ունիս կվարդապետդ. միայն յայն կգուշացիր, որպէսզի կոր ինչ հրամայէ քեզ՝ ոչ արհամարհեսցես»:** *Քո մեջդ ունես քո վարդապետը, նրան նայիր և նրան թելադրածը կատարիր, որպեսզի հասնես երջանկության, որպեսզի կարենաս դառնալ ճշմարիտ մարդ, ճշմարիտ քրիստոնյա և ճշմարիտ հայ, քո ազգի համար, քո եկեղեցու համար և Աստուծուն փառքին համար հավիտյանս, ամեն:*

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ս. Էջմիածին
Մարտ 1996 թ.